ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
<<ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 5
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

RA SHIRAK REGION
„GYUMRI NUMBER 5MAIN
SCHOOL" SNPO

3114, ՀՀ ԳՅՈՒՄՐԻ, Մատնիշյան 301
☎ (0312) 5-13-59, 4-06-87
էլ. փոստ gyumri5@schools.am

301 Matnishian GYUMRI, RA, 3114
☎ (0312) 5-13-59, 4-06-87
e-mail gyumri5@schools.am

17 հունվարի 2025 թվական

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ» Ա/Ձ -ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար «սննդամթերքի» ձեռքբերման «ՇՄԳ5ՀԴ-ԳՀԱՊՁԲ-25» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 2024 թվականի դեկտեմբերի 19-ին, ժամը 12:00-ին:

«ՇՄԳ5ՀԴ-ԳՀԱՊՁԲ-25» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Կարեն Մանուկյան» Ա/Ձ-ն, և գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակցին է ուղարկվել պայմանագրի նախագիծը և ծանուցումը պայմանագիր կնքելու առաջարկի մասին, որտեղ նշված է՝

Ընտրված մասնակիցը պայմանագրերը համապատասխան ապահովումների հետ ներկայացնում է հրավերով սահմանված կարգով, Պատվիրատուի կողմից պայմանագրերը հաստատվում է միայն համապատասխան սերտիֆիկատների, սանիտարական գրքույքների, մեքենաների մասով ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմք փաստաթղթերի, վարորդի վարորդական վկայականի պատճենի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումից հետո: Պայմանագիր չի կնքվում եթե բացակայում է վերը նշված փաստաթղթերից որևէ մեկը: Պայմանագիր չի կնքվում նաև այն դեպքում երբ պարզվում է, որ ներկայացված փաստաթղթերը կեղծված են և միակողմանի լուծվում են դրա պարզ դառնալու պահին:

Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց ***5 աշխատանքային օրվա ընթացքում*** *չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*

Միաժամանակ հայտնում եմ, որ պայմանագրի նախագծում «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված փոփոխություններ կատարելու դեպքում անհրաժեշտ է դրանք նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Առանց պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնելու պայմանագրի նախագծում փոփոխություն կատարելը առաջացնում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց **5 աշխատանքային օրվա ընթացքում** չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, և նա զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Արդյունքում «Կարեն Մանուկյան» Ա/Ձ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և համաձայն «Գնումների մասին« ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի գտնում եմ, որ «Կարեն Մանուկյան» Ա/Ձ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են բոլոր հիմքերը, քանի որ տվյալ ընթացակարգը իրականացվել է առանց հայտի ապահովման պահանջի, ուստի հայտի ապահովման գումար չի կարող պահանջվել և գանձվել, հետևաբար որոշում եմ՝ «Կարեն Մանուկյան» Ա/Ձ-ին ներառել տվյալ ցուցակում:

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող՝ _____Ս. Սահակյան
(ստորագրություն)

Կ.Տ